«Հայոց թվական՝ 1191 տիր» (=1742)։ Տպագր. վայրը և տպագրիչը նշված չեն, նման է Կ. Պոլսի տպագրություններին։

27. ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ։ Կ. Պոլիս (՞), 1777։ Մատենադարան, № 1561, Հանրային գրադարան, № 160, 162։

Անվանաթերթը, էջերի քանակը և բովանդակությունը նույնն է, ինչ որ նախորդ հրատարակությանը (№ 26), միայն տարբերություններ կան անվանաթերթի զարդերի և գրքի շարվածքի մեջ, ՃՀԶ (176) էջում «Հայոց թվական 1226 տրր» (=1777)։

28. Սահակ Սոֆելյան ՏԵՏՐԱԿ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ։ Վենետիկ, 1791. 45 զարդափակ էջ։ Հանրային գրադարան, № 145։

Անվանաթերթն սկսվում է՝ Տետրակ ներողութեանց. Տանկեվար։ Առարեալ ի սոֆելեան Սահակ վարդապետէ... Ապա՝ Տպագրեալ յամի տեառն 1791 ի սեպտեմբեր 10. վերջում՝ Ի Վենետիկ. Հրամանաւ մեծաւորաց։ Բնագրում կան նաև հայերեն հատվածներ։

29. Անվանաթերթ՝ Քրիսթիյան թալիմի։ 1791. 320 (՞) զարդափակ էջ։ Հանրային գրադարան, № 153։

Բնագրում հայերեն հատվածներ։ Տպագր. վայրի ու տպագրիչի մասին գրքից տեղեկություն ստանալ չկարողացանք։

30. Պատմութիւն փոնցիանոս կայսերին, վէ թագուն Սուլթանքն, վէ էլլատի Դիոկղէտիանոս շահ զատէնին, վէ եէտի իլիմտար ֆիմէ անէլէլին։ 222 զարդափակ էջ, պատկերներ, զարդագրեր։ Անվանաթերթ չունի։ Մատենադարան № 155, 156, Հանրային գրադարան, № 107, 151։

Ժամանակին հայերի մեջ տարածված «Պատմութիւն Փոնցիանոս կայսեր»-ի թուրքերենն է։ Տպագր. որևէ տվյալ չունի։ Հավանաբար Կ. Պոլսի տպագրություն է, 18-րդ դարի վերջի։ Գրքի վերջազարդի վրա Նահապետ անունը կա, նույնը 220 էջի ոտանավորի սկզբնատառերն են կազմում։